

ԱՆԻ ԱՐՇԱԿՅԱՆ

Բիզնեսի կազմակերպում,
բակալավորիադ, 4-րդ կուրս

ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՇԱՐԺԸՆԹԱՑԸ ՀՀ-ՈՒՄ

Հիմնաբառեր. մանրածախ առևտուր, ապրանքաշրջանառություն, դրամական եկամույններ, իրական աշխատավարձ, գնաճ

Մանրածախ առևտուրը բնակչության կենսաապահովման կարևոր ոլորտներից է, որի միջոցով իրականացվում է սպառողական նշանակության ապրանքների նկատմամբ բնակչության պահանջմունքների բավարարումը: Ապրանքաշրջանառությունը բնակչության կենսամակարդակը բնութագրող կարևորագույն ցուցանիշներից է: Մանրածախ առևտրի շրջանառության ծավալների ավելացումն ուղղակիորեն պայմանավորված է բնակչության դրամական եկամույնների իրական աճով: Հոդվածում քննարկվում են ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության շարժընթացը, դրա վրա պնային տնտեսությունների դրամական եկամույնների ու սպառողական ծախսերի ազդեցությունը և դրա ձևավորման աղբյուրների կառուցվածքային փոփոխությունները:

Մանրածախ առևտրի շրջանառությունը վերջնական սպառման կամ տնային տնտեսությունում օգտագործման համար նախատեսված սպառողական ապրանքների վաճառքն է:

Մանրածախ ապրանքաշրջանառությունը մեծ դեր ունի երկրի տնտեսական և սոցիալական քաղաքականության զարգացման գործում: Դրանով է բնութագրվում սպառողական ապրանքների նկատմամբ բնակչության պահանջարկի բավարարման մակարդակը, խթանվում արտադրության զարգացումը, կազմակերպությունների կապիտալի շրջապտույտը, որոշվում արտաքին տնտեսական գործունեության ծավալները, բյուջետային մուտքերն ու մակրոտնտեսական այլ ցուցանիշներ¹:

Ըստ ՄԱԿ-ի դասակարգման՝ մանրածախ ապրանքաշրջանառությունը կյանքի մակարդակը բնութագրող ցուցանիշներից է:

ՀՀ վիճակագրական հաշվառման գործող կարգի համաձայն՝ մանրածախ առևտրի շրջանառության ծավալը հաշվարկվում է հետևյալ աղբյուրների՝ խանութների, սպառողական ապրանքների շուկաների, գյուղատնտեսական արտադրանքի շուկաների, կրպակների, առևտրի այլ օբյեկտների (շարժիչային և կենցաղային վառելիքի մանրածախ վաճառքի օբյեկտներ) շրջանառության ցուցանիշներով:

Մանրածախ առևտրի շրջանառության ծավալը հաճախ բնութագրում է ազգային տնտեսությունը, արտացոլում է արդյունաբերության և գյուղատնտեսության վիճակը, գնաճային գործընթացները, բնակչության բարեկեցության մակարդակի փոփոխությունները, կոնյունկտուրան, ինչպես նաև շուկայի ներքին տարողունակությունը:

Ժամանակի ընթացքում մանրածախ առևտրի շրջանառության ցուցանիշների փոփոխությունը հիմնականում պայմանավորված է բնակչության

¹ Տե՛ս Գ. Ս. Չաոխյան, Առևտրի տնտեսագիտություն, Երևան 2014, էջ 104:

իրական դրամական եկամուտների աճով, որը նպաստում է բնակչության կենսամակարդակի բարձրացմանը՝ իր անմիջական ազդեցությունը թողնելով ապրանքաշրջանառության ծավալների և ապրանքային կառուցվածքի փոփոխությունների վրա: Վերջինս հանգեցնում է սպառողական ապրանքների վաճառքի ծավալների կայուն աճին, ապրանքաշրջանառության կառուցվածքի լավացմանը, մասնավորապես՝ վաճառքի ծավալներում մսամթերքի, ձկնեղենի, բանջարեղենի, մրգերի տեսակարար կշռի մեծացմանը:

ՀՀ տնային տնտեսության մեկ շնչի հաշվով միջին ամսական դրամական եկամուտների և ապրանքների ձեռք բերման ծախսերի մակարդակը և կառուցվածքը 2003-2016 թթ. ներկայացված են աղյուսակ 1-ում, ինչից էլ երևում է, որ տնային տնտեսությունների միջին ամսական դրամական ծախսերն ունեն աճման միտում:

Աղյուսակ 1

ՀՀ տնային տնտեսությունների դրամական եկամուտները և սպառողական ծախսերը 2003-2016 թթ.

(միջին ամսական մեկ շնչի հաշվով, հազ.դրամ)¹

Տարիներ Ցուցանիշ	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Դրամական եկամուտներ, ընդամենը	9.8	13.3	15.9	18.5	22.3	26.9	28.0	31.6	34.2	39.1	42.4	49.6	52.4	56.6
Սպառողական ծախսեր	12.0	14.4	21.1	23.3	26.3	28.9	27.7	28.7	32.6	34.9	36.8	40.8	42.9	43.9
Այդ թվում՝ (փակագծերում %-ով ընդամենի նկատմամբ)														
Պարենային ապրանքների ձեռք բերման	8.7 (72.7)	10.5 (72.8)	13.1 (61.7)	14.3 (61.5)	15.3 (72.7)	16.2 (58.1)	15.4 (55.7)	16.1 (56.3)	18.6 (56.9)	18.5 (53.0)	19.1 (52.0)	20.3 (49.8)	20.4 (47.6)	20.1 (45.8)
Ոչ պարենային ապրանքների ձեռք բերման	1.6 (13.5)	2.0 (14.1)	3.0 (14.3)	3.3 (14.0)	4.1 (15.6)	4.7 (16.4)	4.3 (15.5)	4.4 (15.5)	5.0 (15.4)	6.2 (17.6)	6.6 (17.9)	7.4 (18.1)	8.1 (18.9)	8.7 (19.8)


2003-2016 թթ. ընթացքում դրանք աճել են 3.7 անգամ, ընդ որում՝ պարենային ապրանքների գնման վրա կատարված ծախսերը աճել են 2 անգամ, իսկ ոչ պարենային ապրանքների գնման վրա կատարված ծախսերը՝ 6 անգամ: Տնային տնտեսությունների միջին ամսական դրամական ծախսերի հավելաճի միջին տարեկան տեմպը այդ տարիներին կազմել է 11.1%, ընդ որում՝ պարենային ապրանքների գնման վրա կատարված ծախսերի գծով՝ 7%, ոչ պարենային ապրանքների գնման վրա կատարված ծախսերի գծով՝ 14.7%:

Աղյուսակ 1-ում ներկայացված տվյալներից ակներև է դառնում, որ բնակչության ապրանքների սպառման կառուցվածքում տարեցտարի իջնում է պարենային ապրանքների գնման վրա կատարված ծախսերի բաժինը, հատկապես սննդամթերքի ձեռք բերման ծախսերը: 2003-2016 թթ. ժամանակաշրջանում տնային տնտեսության մեկ շնչի հաշվով սպառողական ծախսերի կառուցվածքի փոփոխության հիմնական միտումն այն է, որ ոչ պարենային

¹ Աղյուսակը կազմվել է ըստ՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք-2008, էջ 331, Հայաստանի վիճակագրական տարեգիրք-2013, էջ 356, Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2017, էջ 357:

ապրանքների տեսակարար կշռի բարձրացման օրինաչափությունները դրսևորվում են երկարատև ժամանակաշրջանում:

2003-2016 թթ. բնակչության պահանջարկի ընդհանուր ծավալում ոչ պարենային ապրանքների բաժինն աճել է 6.3%-ային կետով, իսկ պարենային ապրանքների բաժինը նվազել է 26,9%-ային կետով: Պարենային և ոչ պարենային ապրանքների պահանջարկի հարաբերակցությունում դրսևորվող օրինաչափությունն օբյեկտիվորեն պայմանավորված է անձնական պահանջմունքների բնույթով: Մարդու՝ սննդամթերքի նկատմամբ պահանջմունքները որոշակի շրջանակներում սահմանափակ են և կախված են մարդկային օրգանիզմի ֆիզիոլոգիական հնարավորություններից: Ուստի, հասնելով սննդամթերքի նկատմամբ պահանջմունքների հագեցվածության որոշակի մակարդակի՝ պարենային ապրանքների նկատմամբ պահանջարկի հետագա աճը սկսում է դանդաղել, ինչի հետևանքով կրճատվում է սննդամթերքի բաժինը բնակչության պահանջարկի ընդհանուր ծավալում:



Գծապատկեր 1. ՀՀ մանրածախ առևտրի շրջանառության, մեկ աշխատողի միջին ամսական անվանական և իրական աշխատավարձերի, դրամի գնողունակության համաթվի շարժընթացը 2003-2016 թթ.

Գծապատկեր 1-ից երևում է, որ մեկ աշխատողի հաշվով միջին ամսական անվանական և իրական աշխատավարձերի շարժընթացը 2003-2016 թթ. ունեցել է զարգացման ոչ միանշանակ միտում: Մասնավորապես, իրական աշխատավարձի աճի տեմպերը զիջում են անվանական աշխատավարձի աճի տեմպերին, ինչը հետևանք է բնակչության գնողունակության անկման: Ուսումնասիրվող ժամանակաշրջանում սպառողական գներն ունեցել են հիմնականում աճման միտում, որն իր բացասական ազդեցությունն է թողել մանրածախ ապրանքաշրջանառության ֆիզիկական ծավալի մակարդակի վրա:

Աղյուսակ 2-ի տվյալների վերլուծությունից երևում է, որ 1998-2016 թթ. ժամանակահատվածում ՀՀ մանրածախ առևտրի շրջանառության շարժընթացն ունեցել է ոչ կայուն աճի տեմպ:

ՀՀ սպառողական շուկան բնութագրող հիմնական ցուցանիշների շարժընթացը 1998-2016 թթ.¹

	1998	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Մանրածախ առևտրի շրջանառության համաթիվը	112.9	115.8	120.3	114.6	108.2	113.2	113.8	113.4	100.6	109.1	112.0	105.9	105.3	100.9	89.6	94.6
Մանրածախ առևտրի շրջանառության ֆիզիկական ծավալի համաթիվը	91.8	114.6	114.3	105.9	107.5	110.5	110.0	104.4	100.1	100.3	102.0	102.4	100.8	99.6	87.2	97.4
Պարենային ապրանքների ֆիզիկական ծավալի համաթիվը	81.3	108.9	111.2	98.7	109.9	119.6	114.3	107.0	106.7	102.9	115.9	102.0	110.0	97.6	86.2	97,6
Ոչ պարենային ապրանքների ֆիզիկական ծավալի համաթիվը	158.8	126.1	124.8	114.5	116.0	126.3	124.8	116.1	101.7	102.7	126.3	100.4	112.6	99.2	84.2	96.9
Միջին ամսական անվանական աշխատավարձի համաթիվը	132.5	111.6	127.3	124.9	119.8	119.7	119.2	117.8	109.9	106.9	105.3	104.7	104.1	108.2	108.2	101.6
Միջին ամսական իրական աշխատավարձի համաթիվը	121,9	110,4	121,6	116,7	119,1	116,3	114,1	108,0	106,2	98,8	97,8	102,0	98,4	105,1	104,4	103,0
ՀՆԱ դեֆլյատոր	110.7	102.3	104,6	106.3	103.2	104.6	104,1	105,9	102,6	107,8	104,3	98,8	103.4	102,3	101,2	100,5

¹ Աղյուսակը կազմվել է ըստ՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք-2001, Հայաստանի վիճակագրական տարեգիրք-2007, էջ 74, 397, 331, Հայաստանի վիճակագրական տարեգիրք -2012, էջ 86, 350, 412, Հայաստանի վիճակագրական տարեգիրք-2017, էջ 86, 357, 416:

Այսպես, մանրածախ առևտրի շրջանառության փաստացի ծավալների ամենաբարձր մակարդակն արձանագրվել է 2003 թ.՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով 20.3%-ով: Այն հիմնականում պայմանավորված է եղել ինչպես միջին ամսական իրական աշխատավարձի աճով (21.6%), այնպես էլ սպառման ապրանքների գնաճով (4.7%): Մինչև 2007 թ., ներառյալ մանրածախ առևտրի շրջանառության ծավալները, նախորդ տարվա համեմատ, համադրելի գներով աճել են, ինչը պայմանավորված է եղել բնակչության միջին ամսական իրական աշխատավարձի աճով:

Թեպետ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի և հետ-ճգնաժամային տարիներին մանրածախ ապրանքաշրջանառության ծավալների փաստացի գներով նվազման միտում չի արձանագրվել, սակայն նկատվել է նախորդ տարիների համեմատ հավելածի տեմպի նվազում:

2009 թ. մանրածախ ապրանքաշրջանառության վաճառքի ֆիզիկական ծավալները, նախորդ տարվա համեմատ, աճել են ընդամեն 0.1%-ով, իսկ 2013 թ. համեմատ՝ 0,8%-ով: Որոշակի բարելավում է նկատվել 2011 և 2012 թթ., մասնավորապես՝ 2011 թ. ոչ պարենային ապրանքների վաճառքի ծավալները, նախորդ տարվա նկատմամբ, ավելացել են 26.3%-ով, պարենա-յինը՝ 15.9%-ով:

Աղյուսակ 3

ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալի շարժընթացը 2003-2016 թթ., ըստ ձևավորման աղբյուրների¹

(մլրդ. դրամ)

Տարիներ	Մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը					
	ընդա-մենը	այդ թվում				
		խանութ-ներ	սպառողական ապրանքների շուկաներ	գյուղատնտեսա-կան ապրանք-ների շուկաներ ²	կրպակ-ներ	առևտրի այլ օբյեկտներ ³
2003	688.5	282.3	243.2	24.6	63.4	75.0
2004	789.0	324.4	306.6	24.5	53.8	79.7
2005	853.9	386.0	315.6	25.6	51.7	75.0
2006	820.8	382.2	273.0	22.6	43.1	99.9
2007	934.4	475.1	260.9	23.5	43.2	131.7
2008	1059.6	610.0	213.4	23.4	40.3	172.5
2009	1065.5	628.3	166.8	21.9	41.3	207.2
2010	1162.3	700.5	172.1	24.3	42.5	222.9
2011	1302.3	831.0	160.0	23.0	44.8	243.5
2012	1379.5	898.6	153.1	19.6	39.0	269.2
2013	1452.5	1026.3	101.1	19.6	32.7	272.8
2014	1 466.1	1 080.1	85.9	20.3	30.9	248.9
2015	1 314.0	969.0	85.6	20.5	29.8	209.1
2016	1 243.6	963.2	81.2	18.6	27.5	153.1
Հավելածի միջին տարե-կան տեմպը, %	4.9	5.3	-7	-1.9	-6	7.1

¹ Սույն ցուցանիշը վերաբերում է շարժիչային և կենցաղային վառելիքի մանրածախ վաճառքի օբյեկտներին:

² Աղյուսակը կազմված է ըստ՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2007, էջ 331, 2012, էջ 350, 2017, էջ 357:

³ Սույն ցուցանիշը չի ներառում գյուղատնտեսական արտադրանքի չկազմակերպված շուկաների առևտրի շրջանառությունը:

2015 թ. արձանագրվել է մանրածախ ապրանքաշրջանառության վաճառքի թե՛ փաստացի, թե՛ ֆիզիկական ծավալների նվազում: Այս ցուցանիշի վրա իր ազդեցությունն է ունեցել արտաքին մասնավոր տրանսֆերտների ծավալի կրճատումը, որը 2015 թ. հունվար-նոյեմբեր ամիսների ընթացքում, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ, նվազել է 37.2%-ով: Ընդ որում, ՌԴ-ից ստացված տրանսֆերտների ծավալը նույն ժամանակահատվածում նվազել է 43.4%-ով:

2016 թ., պայմանավորված գնաճի անկմամբ, մանրածախ ապրանքաշրջանառության վաճառքի տեմպերը նվազել են:

Շուկայական տնտեսության անցմանը զուգընթաց զգալի փոփոխությունների են ենթարկվել հանրապետության մանրածախ առևտրի շրջանառության ձևավորման աղբյուրները և մանրածախ ապրանքաշրջանառության պարենային և ոչ պարենային ապրանքախմբերի հարաբերակցությունը:

Ինչպես երևում է աղյուսակ 3-ում ներկայացված տվյալներից, ՀՀ մանրածախ առևտրի շրջանառության ընդհանուր ծավալը 2003-2016 թթ. աճել է 1.8 անգամ: Նշված ժամանակահատվածում գրեթե 3.4 անգամ ավելացել են խանութների շրջանառության ծավալները, իսկ առևտրի այլ օբյեկտների շրջանառությունը՝ 2 անգամ: Ինչ վերաբերում է մանրածախ առևտրի շրջանառության ձևավորման մյուս աղբյուրներին, ապա արձանագրվել է ծավալների կրճատում:

Այսպես, 57%-ով նվազել է կրպակների շրջանառության, 67%-ով՝ սպառողական ապրանքների շուկաների, 24%-ով՝ գյուղատնտեսական ապրանքների շուկաների ծավալները: Նման հարաճուն փոփոխությունները հանգեցրել են մանրածախ առևտրի շրջանառության կառուցվածքի նոր հարաբերակցության:

ՀՀ մանրածախ առևտրի ընդհանուր կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունի խանութների շրջանառությունը՝ 2016 թ. 77.5%՝ 2003 թ. 41%-ի փոխարեն, ինչը վկայում է առևտրի կազմակերպման կատարելագործման մասին:

Զգալիորոն նվազել է կրպակների առևտրաշրջանառության տեսակարար կշիռը՝ 2016 թ. 2.2%՝ 2003 թ. 9.2%-ի փոխարեն:

Որոշակի կառուցվածքային տեղաշարժեր է նկատվել նաև գյուղատնտեսական ապրանքների շուկաներում իրականացվող առևտրում: Եթե 2003 թ. գյուղատնտեսական ապրանքների շուկաների առևտրի փաստացի ապրանքաշրջանառությունը կազմել է 25.1 մլրդ դրամ, իսկ 2009 թ.՝ 21.9 մլրդ դրամ, ապա 2016 թ.՝ 18.6 մլրդ դրամ: Մանրածախ առևտրի ընդհանուր շրջանառության մեջ առևտրի այս ձևի բաժնեմասի տեսակարար կշռի իջեցումը հիմնականում պայմանավորված է վերջին տարիներին պարենային ապրանքների խանութների մեծ մասում նաև գյուղմթերքի վաճառքով:

Այսպիսով, շուկայական տնտեսության պայմաններում մանրածախ առևտրի շրջանառության որակական կառուցվածքի բարելավման նպատակով անհրաժեշտ է վերլուծել բնակչության եկամուտների և սպառման ծավալի ու կառուցվածքի փոփոխությունները: Բնակչության ծախսերի ծավալը և կառուցվածքը նրա եկամտի օգտագործման հիմնական ցուցանիշներն են: Սպառողական ծախսերի ընդհանուր գումարն ընթացիկ և համադրելի գնե-րով, շարժընթացը և տեսակարար կշիռը բնակչության (տնային տնտեսու-

թյան) դրամական և ամբողջական եկամուտներում բնութագրում է մի կողմից բնակչության սպառողական և մյուս կողմից՝ սպառողական շուկայի հնարավորությունները:

Սպառողական շուկայում գնողունակ պահանջարկը սահմանափակող երկրորդական գործոն պետք է դիտել գների փոփոխությունը, մասնավորապես՝ գնաճային գործընթացները: Վերջինս բնութագրում է մակրոտնտեսական անկայունությունը: Ընդ որում, գները կարող են բարձրանալ անհավասարաչափ. որոշ ապրանքների գները կարող են կտրուկ բարձրանալ, մյուսներինը՝ դանդաղ կամ կարող են ընդհանրապես չփոփոխվել: Պետք է հաշվի առնել նաև, որ գնաճն ուղեկցվում է գնաճային սպասումներով, որն իր արտահայտությունն է գտնում գնորդի և վաճառողի վարքի, հոգեբանության մեջ:

АНИ АРШАКЯН

ДИНАМИКА РОЗНИЧНОГО ТОВАРООБОРОТА В АРМЕНИИ

Ключевые слова: *розничная торговля, товарооборот, денежные доходы, реальная заработная плата, инфляция.*

Розничная торговля является одной из ключевых сфер жизни населения, благодаря которой осуществляется удовлетворение потребностей населения в потребительских товарах. Его товарооборот является одним из важнейших показателей, характеризующих уровень жизни. Увеличение объема оборота розничной торговли напрямую обусловлено реальным увеличением денежных доходов населения. В статье обсуждается динамика розничного товарооборота Армении, в том числе влияние доходов домашних хозяйств и потребительских расходов и структурные изменения в их источниках образования.

ANI ARSHAKYAN

DYNAMICS OF RETAIL TURNOVER IN ARMENIA

Key words: *retail, commodity turnover, cash incomes, real wages, inflation.*

Retail trade is one of the key spheres of the population's livelihood through which the satisfaction of the population's needs for consumer goods is carried out. Its commodity turnover is one of the most important indicators characterizing the living standards of the population. The increase in the volume of retail trade turnover is directly conditioned by the real increase in the population's cash incomes. The article discusses the dynamics of Armenia's retail commodity circulation, including the impact of households' incomes and consumer expenditures and the structural changes in their formation sources.